**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4**

11.01.2023 թվականին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 գնման պայմանագրի

ք. Մեծամոր «25» Ճայիսի 2024թ.

Մեծամորի համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավարի պ/կ Է. Հովհաննիսյանի, ով գործում է «ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ ՍՊԸ» - «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ կոնսորցիումն, ի դեմս «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Արամյանի, ովը գործում է «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ, հիմք ընդունելով 11.01.2023թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.1, 8.5 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **Համաձայնագրի առարկան**

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի Հավելված թիվ 1-ով սահմանված 1-ին չափաբաժնի մասով «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ի «Ժամկետը**» սյունակի «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած 310 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

1.2 Պայմանագրով հաստատված Հավելված 2-ով ներկայացված «Օրացուցային գրաֆիկ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը» սյունակի «Ավարտը» ենթասյունակի «Աշխատանքաների սկզբից 250 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից 310 օրացուցային օրվա ընթացքում» բառերով, ինչպես նաև Պայմանագրի շրջանակներում կնքված Համաձայնագիր 3-ում 1-ին կետի 1.2 կետով «…ներկայացված «Օրացուցային գրաֆիկ»-ի «Աշխատանքների կատարման ժամկետը» սյունակի «Ավարտը» ենթասյունակի « Աշխատանքաների սկզբից 192 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «Աշխատանքաների սկզբից 252 օրացուցային օրվա ընթացքում» բառերով:

2. **Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Մեծամորի համայնքապետարան
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի վարչական կենտրոն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900332239426, 900332001610
ՀՎՀՀ 04440608

Համայնքի ղեկավարի պ/կ՝ ---------------- Է. Հովհաննիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ – «ԱՎԵՏԻՍ-ԽԵՑԻ» ՍՊԸ կոնսորցիում
ՀՀ, Արարատի մարզ, ք.Արտաշատ, Շահումյան 36Ա
Հ/Հ 220013335280000
«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ԲԲԸ «Արարատ» մ/ճ
ՀՎՀՀ 04242551

Տնօրեն՝ ---------------- Տ. Արամյան
/ստորագրություն/
Կ.Տ

AMERIABANK

19.03.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.4902.24

*Բենեֆիցիար՝*
*Մեծամորի համայնքապետարան*

**ԹԻՎ O.AB.100.12CIB.PIED.0.16919.23 ԵՐԱՇԽԻՔԻ**
**(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ) ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

Սույնով Մեծամորի համայնքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ և «ԱՎԵՏԻՍ ԽԵՅԻ» ՍՊԸ Կոնսորցիումի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 11.01.2023թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 պայմանագրից բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների պատշաճ կատարման ապահովման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 30.08.2023թ. թողարկված 9,926,264.00 (ինը միլիոն ինը հարյուր քսանվեց հազար երկու հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով թիվ O.AB.100.12CIB.PIED.0.16919.23 բանկային երաշխիքի (այսուհետ՝ Երաշխիք) 5-րդ կետը վերաշարադրվում է հետևյալ կերպ.

«5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2025 թվականի ապրիլի 28-ի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 10 հոկտեմբերի 2025թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (info@epromotion.am)»:

Երաշխիքի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

**Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝**
**Սուրեն Քոչարյան**

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

**AMERIABANK**

19.03.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.4903.24

*Բենեֆիցիար՝*
*Մեծամորի համայնքապետարան*

**Թ Ի Վ O.AB.100.12CIB.PIED.0.16931.23 Ե Ր Ա Շ Խ Ի Ք Ի**
**( Ո Ր Ա Կ Ա Վ Ո Ր Մ Ա Ն Ա Պ Ա Հ Ո Վ Ո Ւ Մ ) Փ Ո Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Սույնով Մեծամորի համայնքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՀՈՒՍԱԼԻ ՇԻՆԱՐԱՐ» ՍՊԸ և «ԱՎԵՏԻՍ ԽԵՑԻ» ՍՊԸ Կոնսորցիումի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 11.01.2023թ. կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-22/71-1 պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովման նպատակով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 30.08.2023թ. թողարկված 29,778,791.00 (քսանինը միլիոն յոթ հարյուր յոթանասունութ հազար յոթ հարյուր իննսունմեկ) ՀՀ դրամ գումարի չափով թիվ O.AB.100.12CIB.PIED.0.16931.23 բանկային երաշխիքում (այսուհետ՝ Երաշխիք) կատարվում է հետևյալ փոփոխությունը.

«5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 2024 թվականի ապրիլի 28-ի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 10 հոկտեմբերի 2024թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (info@epromotion.am):»:

Երաշխիքի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

**Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար**
**Սուրեն Քոչարյան**

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou